Կարծիք

Նաիրա Արարատի Թոռունյանի «Մայրենիի դասագործընթացում կրտսեր դպրոցականի բառապաշարի հարստացման մեթոդները» խորագրով ԺԳ. 00.02 «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» / հայոց լեզու/ մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Հետազոտության արդիականությունը կասկած չի հարուցում, քանի որ կրտսեր դպրոցականի բառապաշարը պետք է արտացոլի կրթության, տնտեսության, քաղաքանության և մարդկանց կենսագործունեության այլ որոլտներում տեղի ունեցող փոփոխությունները: Հայերենը շարունակաբար հարստանում է նորաբանություններով, փոխառություններով, գիտության և տեխիկայի զարգացման շարժընթացը ներկայացնող նոր եզրույթներով: Մայրենի լեզուն բազմագործառույթ է: Եթե դպրոցում կրտսեր դպրոցականի բառապաշարը հավուր պատշաճի կամ համապատասխան լեզվական մակարդակում չեն յուրացնում, ապա ապագայում լուրջ խնդիրներ են առաջ գալիս: Սույն հետազոտությամբ փորձ է արվում մշակել կրտսեր դպրոցականի բառապաշարի հարստացման արդյունավետ մեթոդական համակարգ:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, առաջարկություններից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Աշխատանքի ծավալը համակարգչային շարվածքով 164 էջ է:

Ներածական մասում ատենախոսը հիմնավորել է թեմայի արդիականությունը, սահմանել է հետազոտության նպատակը, խնդիրները, ձևակերպել է օբյեկտը և առարկան, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանության ներկայացվող դրույթները:

Ատենախոսության՝ **«Կրտսեր դպրոցականի բառապաշարի հասրտացման գիտատեսական և մեթոդաբանական հիմքերը»** խորագրով առաջին գլուխը բաղկացած է երեք ենթագլխից: Առաջին՝ **«Կրտսեր դպրոցականի բառապաշարի հասրտացման**

մեթոդական սկզբունքների պատմատեսական նախադրյալները» ենթագլխում ատենախոսը ներկայացնում է հայոց լեզվի դասավանդման մեթոդիկայի ձևավորման և զարգացման պատմությունը:

Երկրորդ՝ **«Հիմնախնդրի դրվածքը հայ և արտասահմանյան մեթոդիկայում»** ենթագլխում ատենախոսը ներկայացնում է կրտսեր դպրոցական բառապաշարի հասրտացմանը վերաբերող հայրենական և արտասահմանյան տեսությունները և մոտեցումները:

Երրորդ՝ **«Կրտսեր դպրոցականի բառապաշարի հարստացման գործընթացը ժամանակակից տարրական դպրոցում»** ենթագլխում ատենախոսը քննության է առնում այն մեթոդներն ու մեթոդական հնարները, որոնք աչքի են ընկել իրենց արդյունավետությամբ: Ատենախոսը փորձել է վերանայել կրտսեր դպրոցականի բառապաշարի հարստացման ուղիները և ձևերը, առաջարկել է բառային աշխատանքի քայլաշարի մոդելը: Այդ մոդելում մեծ տեղ է հատկացվում նորածանոթ բառերի ներմուծմանը և ամրապնդմանը: Հետազոտության նորույթներից մեկն այն է, որ ատենախոսը փորձում է մշակել թեմատիկ բառաշարքեր, հաշվի առնելով բառերի գործածության հաճախականության սկզբունքը: Ըստ այդմ, ատենախոսին հաջողվում է իր կողմից առաջադրվող դրույթները հիմնավորել կոնկրետ օրինակներով:

Երկրորդ «Բնագրի շուրջ աշխատանքը՝ որպես սովորողների բառապաշարի հարստացման արդյունավետ մեթոդական բաղադրիչ» խորագրով երկրորդ գլուխը բաղկացած է երեք ենթագլխից: Առաջին՝ **«Բնագրի հենակետային բառերի դիտարկման մեթոդիկան՝ որպես բառերը գիտակցորեն ըմբռնելու և յուրացնելու ուղի»** ենթագլխում ատենախոսը քննության է առնում մայրենիի դասագրքերում բնագրերի շրջանառվող նորածանոթ և թեմատիկ բառաշարքերի շուրջ բառային աշխատանքի արդյունավետ ուղիները և ձևերը: Ատենախոսը հստակորեն տարազատում է տարբեր դասագրքերում առկա թեմատիկ խմբերը՝ «ծառեր», «բույսեր», «ծաղիկներ» և այլն: Նա առանձնացնում է փորձարարության նպատակով «Ծաղիկներ» թեմատիկ խումբը:

Երկրորդ՝ «Հոմանիշների և հականիշների ուսումնասիրման մեթոդիկան բնագրի շուրջ» ենթագլխում ատենախոսը ներկայացնում է բառիմաստի յուրացման թե՛ մտածական, թե՛ ճանաչողական, ապա նաև խոսքաշարում դրսևորման գործընթացը: Ատենախոսը մշակել է հոմանիշ-հականիշ բառազույգերի վերաբերյալ վարժությունների համակարգ: Նա բառապաշարի յուրացման կարևոր եղանակ է համար փոխներգործուն մեթոդների կիրառումը:

Երրորդ՝ «Բառակազմական վերլուծությունները՝ որպես կրտսեր դպրոցականի բառապաշարի հարստացման արդյունավետ միջոց» ենթագլխում ատենախոսը բացահայտում է կրտսեր դպրոցականի բառակազմական ունակությունների զարգացման առանձնահատկությունները, հիմնավորում է բառակազմամական կաղապարիների կիրառման արդյունավետությունը, ներկայացնում է բառակազմական աշխատանքի մեթոդական քայլաշարը:

Երրորդ՝ **«Կրտսեր դպրոցականի բառապաշարի հարստացման և խոսքի զարգացման առնչությունները»** գլուխը բաղկացած է երեք ենթագլխից: Երրորդ գլխի առաջին **«Բառերի միջև քերականական հարցերի միջոցով կապեր ստեղծելու ունակության ձևավորման մեթոդական համակարգը»** ենթագլխում ատենախոսը ներկայացնում է քերականական հարց առաջադրելու մեթոդական քայլաշարի մոդելը:

Ատենախոսության երկրորդ՝ **«Բնագրի գործածած բայերի շուրջ հարցեր առաջադրելու կարողության ձևավորման մեթոդիկան»** վերնագրով ենթագլխում ատենախոսը ներկայացնում է բայից խնդրառական հարցեր առաջադրելու կարողության ձևավորման ընթացակարգերը:

Երրորդ **«Առարկայական զուգորդումների կիրառման մեթոդիկան բառուսուցման գործընթացում»** ենթագլխում ատենախոսը քննության է առնում բնագիտական և հումանիտար առարկաների կապերի ապահովմամբ սովորողների բառապաշարի հարստացման հնարավորությունները: Նա կարևորվում է նշված համատեքստում դասագրքերի բառամթերքի ցանկերի ստեղծման գաղափարը:

Չորրորդ «**Հիմնախնդիր ուղղությամբ իրականացրած փորձարարությունն ու ընթացքը և արդյունքների վրա մշակած մեթոդական երաշխավորությունները**» ենթագլխում ատենախոսը վերլուծում է գիտափորձի արդյունքները և ներկայացնում է իր կողմից մշակած մեթոդական երաշխավորությունները: Նա ներկայացնում է հետազոտությամբ ստացված վերլուծության արդյունքները: Նա վերլուծում է մայրենիի դասագրքերը, համեմատում է ստուգողական և փորձարարական խմբերում ընդգրկված ուսանողներիի ցույց տված արդյունքները:

Կարելի է եզրահանգել, որ կատարված է մեծածավալ աշխատանք: Հետազոտության բոլոր բաժինները տրամաբանորեն իրար հետ փոխկապակցված են: Այն շարադրված է գրագետ հայերենով: Հոդվածները և սեղմագիրն արտոցոլում են ատենախոսության հիմնական բովանդակությունը: Կարելի է պնդել, որ աշխատանքի թեման արդիական է, գիտական նորույթը կասկած չի հարուցում: Արժևորելով Նաիրա Թոռունյանի կատարած աշխատանքը, կարելի է նշել որոշ նկատառումներ՝

1. Արդիականությունը ներկայացնող բաժնում ատենախոսը հղում է անում «Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական ուսումմառություն՝՝՝» աշխատանքին, կարելի էր հղումն անել տողատակում:
2. Հետազոտության վարկածը ներկայացնելով, ատենախոսը գրում է «Մեր մշակած մեթոդական համալիրը կնպաստի տարրական դասարանների աշակերտների ակտիվ բառապաշարի շարունակական հարստացմանը, եթե՝ ա/կրթության բոլոր օղակներում մայրենիի ուսումնաիրման գործընթացում կատարվեն արմատական փոփոխություններ, մասնավորապես մայրենիի ուսուցումը դառնա առավել գործնական՝՝՝»: Կարծում ենք, տեղին չէ խոսել արմատական փոփոխությունների մասին, եթե խոսք է գնում բառապաշարի հաստատացման մեթոդական համալիրի ներդրման մասին:
3. Մենք կողմ ենք այն մոտեցմանը, որ ավելի ճիշտ է խոսել ոչ թե գիտափորձի, այլ փորձարարական ուսուցման մասին:
4. Աշխատանքում առկա են որոշ տառասխալներ ու վրիպումներ:

Այսպիսով, կարելի է եզրահանգել. որ հետազոտության թեման արդիական է, գիտական նորույթը, տեսական, գործնական նշանակությունը կասկած չեն հարուցում: Ստացված արդյունքները հավաստի են: Կարելի է պնդել, որ Նաիրա Արարատի Թոռունյանի «Մայրենիի դասագործընթացում կրտսեր դպրոցականի բառապաշարի հարստացման մեթոդները» խորագրով թեկնածուական ատենախոսությունն արդիական է, ունի գիտական նորույթ, տեսական և գործնական նշանակություն, բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի պահանջները, համապատասխանում է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանաշնորհման 7-րդ կետի պահանջներին և ԺԳ.00.02 «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (հայոց լեզու) մասնագիտության թվանիշին, իսկ ատենախոսն արժանի է իր հայցած մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս
մանկավարժական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր՝ Ի.Կ.Կարապետյան

Ի.Կ.Կարապետյանի ստորագրությունը
հաստատում եմ:
ՀՊՄՀ-ի գիտ.քարտուղար Մ. Իսպիրյան
06.07. 2021թ.